



ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Քաղաքացիական գործ ԸԻԴ N1982/02/2012թ.
Նախագահող դատավոր՝ Լ.Ավանեսյան
Դատավորներ՝ Հ.Աբրահամյան
Կ.Սաղյան

Քաղաքացիական գործ ԸԻԴ N1982/02/2012թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ

3-ին ապրիլի 2014թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝ վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր Ա.Հայրապետյանի
դատավորներ՝ Վ.Հովսեփյանի
Ի.Կարապետյանի

դոնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Գեղանուշ Արմենի Արզումանյանի ընդդեմ ԼՂՀ Ասկերանի շրջանի վարչակազմի աշխատակազմի՝ Արմեն Արզումանյանին հերթական աշխատանքային արձակուրդ տրամադրելու մասին հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2014 թվականի փետրվարի 13-ի որոշման դեմ պատասխանող ԼՂՀ Ասկերանի շրջանի վարչակազմի ղեկավար Ս.Գրիգորյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

ԼՂՀ Ասկերանի շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչի 2010 թվականի հունիսի 21-ի թիվ 21 հրամանի համաձայն՝ Ասկերանի շրջանի Սղնախի միջնակարգ դպրոցի տնօրեն Արմեն Ալեքսանդրի Արզումանյանին հունիսի 21-ից տրվել է հերթական աշխատանքային արձակուրդ՝ 35 օրացուցային օր տևողությամբ:

2010թ. հունիսի 28-ին Ստեփանակերտ քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 21 տան դիմացի ճանապարհահատվածում տեղի ունեցած ավտովթարի հետևանքով Արմեն Արզումանյանը մահացել է, իսկ նրա դուստր Գեղանուշ Արմենի Արզումանյանի առողջությանը պատճառվել է ծանր վնաս և նա դարձել է 2-րդ կարգի հաշմանդամ:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի /այսուհետ՝ Դատարան/ 2012թ. հունիսի 29-ի օրինական ուժի մեջ մտած վճռով Գեղանուշ Արզումանյանի հայցն ընդդեմ Ասկերանի շրջանի վարչակազմի աշխատակազմի՝ կերակրողի մահվան հետևանքով կրած վնասը հատուցելու մասին, մերժվել է:

Գեղանուշ Արզումանյանը /այսուհետ՝ նաև Հայցվոր/ 2012թ. հոկտեմբերի 26-ին դիմելով Դատարան ընդդեմ Ասկերանի շրջվարչակազմի /այսուհետ՝ նաև Պատասխանող/՝ խնդրել է անվավեր ճանաչել Արմեն Արզումանյանին հերթական աշխատանքային արձակուրդ տրամադրելու մասին Ասկերանի շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի 2010թ. հունիսի 21-ի թիվ 21 հրամանը:

Դատարանի 2013թ. նոյեմբերի 8-ի վճռով հայցը մերժվել է:

ԼՂՀ Վերաքննիչ դատարանի /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ 2014թ. փետրվարի 13-ի որոշմամբ Հայցվորի ներկայացուցիչ Ա.Թարխանյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է: Դատարանի 2013թ. նոյեմբերի 8-ի վճիռը մասնակիորեն բեկանվել ու փոփոխվել է, և Գ.Արզումանյանի հայցը բավարարվել է:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել պատասխանողը՝ Ասկերանի շրջվարչակազմի ղեկավար Ս.Գրիգորյանը:

Գերագույն դատարանի 2014թ. մարտի 19-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ և 50-րդ հոդվածների պահանջները, ճիշտ գնահատական չի տվել գործով առկա ապացույցներին, սխալ է մեկնաբանել ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 99-րդ և 164-րդ հոդվածների պահանջները, որի արդյունքում բեկանել և փոփոխել է Դատարանի օրինական և հիմնավորված վճիռը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

1. Վերաքննիչ դատարանը ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 99-րդ հոդվածի 3-րդ մասի սխալ մեկնաբանման արդյունքում եզրահանգել է, որ Արմեն Արզումանյանին՝ որպես դպրոցի տնօրենի, հնարավոր չէ 2010թ. հունիսի 21-ին տրամադրել արձակուրդ, քանի որ տնօրենի և ուսուցչի համատեղությամբ տրամադրվող արձակուրդները պետք է ընդգրկվեն իրար մեջ:

2. Վերաքննիչ դատարանը մեկնաբանելով ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներն այն մասին, որ ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումն իրականացվում է ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդը սկսվելուց 3 օր առաջ, անհիմն եզրակացրել է, որ պատասխանող կողմը որևէ ապացույց չի ներկայացրել Դատարանին՝ նշված գումարը ժամանակին Ա.Արզումանյանին տրամադրելու մասին:

3. Վերաքննիչ դատարանն ապացույցների սխալ գնահատման արդյունքում Ա.Արզումանյանի անվամբ ուրիշի կողմից դիմում գրելու փաստը դիտել է նրա՝ որպես տնօրենի արձակուրդ գնալու կամահայտնության բացակայություն:

4. Վերաքննիչ դատարանը սխալ է եզրակացրել, որ իբրև վիճարկվող հրամանը պետք է արձակվեր ոչ թե աշխատակազմի կրթության բաժնի վարիչի, այլ շրջվարչակազմի ղեկավարի կողմից:

Ըստ բողոքաբերի՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտմամբ կայացված բողոքարկվող դատական ակտը ոչ միայն հանգեցրել է գործի սխալ լուծմանը, այլև շրջվարչակազմի համար առաջացրել է ծանր հետևանքներ: Բողոքաբերը գտնելով, որ Գերագույն դատարանի որոշումը կապահովի օրենքի միատեսակ կիրառությունը, դրա ճիշտ մեկնաբանումը և կնպաստի իրավունքի զարգացմանը, խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2014թ. փետրվարի 13-ի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 2013թ. նոյեմբերի 8-ի վճռին կամ գործն ուղարկել Դատարան՝ նոր քննության:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ԼՂՀ ժողկրթության, մշակույթի և սպորտի Ասկերանի շրջանային բաժնի 1996թ. օգոստոսի 26-ի թիվ 52 հրամանի համաձայն՝ Արմեն Ալեքսանդրի Արզումանյանը նշանակվել է որպես Ասկերանի շրջանի Սղնախի միջնակարգ դպրոցի տնօրեն և այդ պաշտոնում աշխատել է մինչև իր մահվան օրը՝ 2010թ. հունիսի 28-ը: Նույն դպրոցում Ա.Արզումանյանը համատեղությամբ աշխատել է որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ:

2. Ասկերանի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչի 2010 թվականի հունիսի 21-ի թիվ 21 հրամանի համաձայն՝ Սղնախի միջնակարգ դպրոցի տնօրեն Արմեն Արզումանյանին 2010 թվականի հունիսի 21-ից մինչև հուլիսի 25-ը տրվել է հերթական աշխատանքային արձակուրդ՝ 35 օրացուցային օր տևողությամբ:

3. Գործում առկա թիվ 010886 մահվան վկայականի համաձայն՝ Արմեն Ալեքսանդրի Արզումանյանը մահացել է 2010 թվականի հունիսի 28-ին:

4. Ասկերանի շրջվարչակազմի կրթության բաժնի գլխավոր հաշվապահ Ա.Մելքումյանի կողմից տրված առանց թվակիր տեղեկանքի համաձայն՝ կրթության բաժնի 2010թ. հունիսի 21-ի թիվ 21 հրամանագրի ուժով Սղնախի միջնակարգ դպրոցի տնօրեն Արմեն Արզումանյանի անվամբ հաշվարկվել է 180.522 ՀՀ դրամ արձակուրդային վճար, որը ստացել է նույն դպրոցի փոխտնօրեն Հայկ Հակոբյանը:

5. Ըստ հայցի Գեղանուշ Արմենի Արզումանյանի ընդդեմ Ասկերանի շրջանի վարչակազմի աշխատակազմի՝ կերակրողի մահվան հետևանքով կրած վնասը հատուցելու պահանջի մասին քաղաքացիական գործով Դատարանի 2012թ. հունիսի 29-ի վճռով հայցը մերժվել է, Վերաքննիչ դատարանի 2012թ. սեպտեմբերի 19-ի որոշմամբ Դատարանի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ: Վերաքննիչ դատարանի նշված որոշումը մտել է օրինական ուժի մեջ:

6. VII-CL թիվ 262013 ծննդյան վկայականի համաձայն՝ սույն գործով հայցվոր Գեղանուշ Արզումանյանի հայրը հանդիսանում է Արմեն Ալեքսանդրի Արզումանյանը:

7. 2013 թվականի մարտի 22-ի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման համաձայն՝ 2010 թվականի հունիսի 21-ին, Ա.Արզումանյանը կազմել է թիվ 34 հրամանի քաղվածքը և իրեն ընդգրկել արձակուրդ անցնող ուսուցիչների ցուցակում և որպես ուսուցիչ անցել արձակուրդի:

8.2013 թվականի մարտի 21-ի ՀՆ՝ 540103.13 դատաձեռագրաբանական և դատափաստաթղթաբանական փորձաքննության եզրակացության համաձայն՝ թիվ 34 հրամանի քաղվածքը կազմվել և ստորագրվել է Ա.Արզումանյանի կողմից: Նշված քաղվածքում «5. Արզումանյան Արմեն – 48 օրաց. օր» բառերով գրառումը կատարվել է Արմեն Արզումանյանի կողմից:

9.Գործով հաստատված է, որ որպես տնօրեն արձակուրդ տրամադրելու մասին դիմումը, Սղնախի միջնակարգ դպրոցի տնօրեն Արմեն Արզումանյանի անունից և նրա խնդրանքով գրել և ստորագրել է նույն դպրոցի ուսուցիչ /փոխտնօրեն/ Հայկ Վահանի Հակոբյանը:

4.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է և ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ Սահմանադրության 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր աշխատող ունի ... ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք:

Աշխատողին ամենամյա արձակուրդ տրամադրելու կարգը, արձակուրդի տեսակները, պայմանները, վճարումը և այլն նախատեսված են ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգիրք/ 158-177-րդ հոդվածներով: Օրենսդիրն Օրենսգրքում համատեղությամբ աշխատանքին հատկացրել է ընդամենը մեկ նորմ՝ 99-րդ հոդվածը, որի 1-ին մասի համաձայն՝ համատեղությամբ աշխատանքը հիմնական աշխատանքային ժամանակից դուրս, միննույն գործատուի կամ այլ գործատուի մոտ աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատողի կատարած աշխատանքն է: Օրենսգիրքը չի կարգավորում նույն գործատուի մոտ համատեղությամբ աշխատողների ամենամյա արձակուրդ տրամադրելու կարգը, այլ միայն Օրենսգրքի 99-րդ հոդվածի 3-րդ մասը փաստում է, որ տարբեր գործատուների մոտ համատեղությամբ աշխատողների ամենամյա վճարովի արձակուրդը տրամադրվում է ամենամյա արձակուրդի հետ միաժամանակ:

Գործի նյութերից նկատելի է, որ Արմեն Արզումանյանն աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվել է տարբեր գործատուների մոտ:

Հիմք ընդունելով ԼՂՀ կրթության, գիտության և մշակույթի նախարարության 1996թ. օգոստոսի 26-ի թիվ 122/Մ հրամանը, ԼՂՀ ժողկրթության, մշակույթի և սպորտի Ասկերանի շրջանային բաժինը, 1996թ. օգոստոսի 26-ի թիվ 52 հրամանով Արմեն Արզումանյանին նշանակել է Ասկերանի շրջանի Սղնախ գյուղի միջնակարգ դպրոցի տնօրենի պաշտոնում: Վերջինս, միաժամանակ նույն դպրոցում, համատեղությամբ աշխատել է որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ:

Փաստորեն, սույն հրամանների արձակման պահից սկսած, Ա.Արզումանյանը վերոնշյալ երկու կազմակերպությունների հետ գտնվել է աշխատանքային հարաբերությունների մեջ, ինչը ԼՂՀ-ում գործող աշխատանքային օրենսգրքի նորմերի իմաստով նշանակում է, որ Ա.Արզումանյանի համար, որպես հիմնական գործատու, հանդես է եկել ԼՂՀ կրթության, գիտության և մշակույթի նախարարությունը և ԼՂՀ ժողկրթության, մշակույթի և սպորտի Ասկերանի շրջանային բաժինը, իսկ մյուս գործատուն, հանդիսացել է հենց ինքը՝ Ա.Արզումանյանը, որպես դպրոցի տնօրեն:

Համաձայն Ասկերանի շրջանի Սղնախի միջնակարգ դպրոցի տնօրեն Ա.Արզումանյանի 2010թ. հունիսի 21-ի թիվ 21 հրամանի՝ ի թիվս այլոց, նա իրեն ևս

ընդգրկել է արձակուրդ անցնող ուսուցիչների ցուցակում և որպես ուսուցիչ անցել արձակուրդի՝ 48 օրացուցային օր տևողությամբ: Այսինքն, Ա.Արզումանյանն ունենալով երկու ամենամյա արձակուրդ՝ իր հրամանով առաջին հերթին օգտվել է ավելի բարենպաստ արձակուրդից, որը 13 օրով ավելի է դպրոցի տնօրենին տրամադրվող 35 օրացուցային օր տևողությամբ արձակուրդից: Նշված հրամանը հայցվոր Գ.Արզումանյանի կողմից չի վիճարկվել:

Օրենսգիրքը, համատեղությամբ աշխատանքի դեպքում, հիմնական աշխատավայրում տրամադրվող արձակուրդի կապակցությամբ գործատուին որոշակի պահանջ է ներկայացնում: Օրենսգրքի 99-րդ հոդվածի 3-րդ մասն արձանագրում է, որ տարբեր գործատուների մոտ համատեղությամբ աշխատողների ամենամյա վճարովի արձակուրդը տրամադրվում է հիմնական աշխատավայրում տրամադրվող ամենամյա արձակուրդի հետ միաժամանակ: Ինչպես նկատելի է, հոդվածում օգտագործվում է «արձակուրդը տրամադրվում է», այլ ոչ թե «կարող է տրամադրվել» ձևակերպումը, իսկ դա նշանակում է, որ երկու արձակուրդները պարտադիր են գործատուների համար և դրանք կախված չեն ո՛չ աշխատողի, և ո՛չ էլ գործատուի ցանկությունից: Հոդվածում գործածված «միաժամանակ» բառի տակ պետք է նկատի ունենալ, որ երկու արձակուրդները պետք է տրվեն միասին, զուգահեռ, միևնույն ժամանակում:

Քննարկվող հարցում Գերագույն դատարանը վճռաբեկ բողոքի պատճառաբանությունը և Դատարանի եզրահանգումը համարում է ճիշտ:

Վերաքննիչ դատարանը վկայակոչելով Օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, համաձայն որի՝ ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումն իրականացվում է ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդն սկսելուց երեք օր առաջ, եզրակացրել է, որ հայցվորի կողմից 2010թ. հունիսի 21-ից հետո արձակուրդային գումարներն ստանալու հանգամանքը չի կարող շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչի թիվ 21 հրամանի կազմման ամսաթվի վերաբերյալ թույլատրելի ապացույց համարվել: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը նման միանշանակ եզրահանգման է եկել՝ Օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները չհամադրելով Օրենսգրքի այլ նորմերի դրույթների հետ:

Այսպես, Օրենսգրքի 164-րդ հոդվածի 2-րդ մասից նկատելի է, որ արձակուրդ տրամադրելու հերթականությունը որոշվում է կոլեկտիվ պայմանագրով, իսկ նման պայմանագրի բացակայության դեպքում՝ կողմերի համաձայնությամբ: Ակնհայտ է, որ կոլեկտիվ պայմանագիրը կամ կողմերի համաձայնությունը պարտադիր է դառնում ինչպես գործատուի, այնպես էլ աշխատողի համար: Նման պայմաններում, գործատուն պարտավոր է քայլեր ձեռնարկել՝ աշխատողի կողմից ամենամյա արձակուրդի գնալու կապակցությամբ նախօրոք վճարումներն իրականացնելու համար: Այնինչ, գործի նյութերից նկատելի է, որ գործատուի և Ա.Արզումանյանի միջև արձակուրդի վերաբերյալ որևէ պայմանագիր չի կնքվել, այլ 2010թ. հունիսի 18-ի դիմումի շուրջը եղել է երկուստեք համաձայնություն, որն էլ հիմք է հանդիսացել թիվ 21 հրամանի արձակման համար: Միայն դրանից հետո պատասխանող կողմը հայտ է ներկայացրել ԼՂՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանին՝ արձակուրդային գումարը տրամադրելու խնդրանքով: Հետևաբար, Ա.Արզումանյանին հասանելիք արձակուրդայինի վճարումը փաստապես կախված է եղել հայտի պահանջի բավարարման ժամկետից:

Գործի նյութերով հաստատված է, որ արձակուրդ գնալու կապակցությամբ Ա.Արզումանյանի անունից և նրա խնդրանքով 2010թ. հունիսի 18-ի դիմումը Ասկերանի

շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնում գրվել և ստորագրվել է Սղնախի միջնակարգ դպրոցի փոխտնօրեն Հայկ Հակոբյանի կողմից: Ինչպես դատաքննությամբ, այնպես էլ ԼՂՀ դատախազության ստուգման նյութերով իրենց հաստատումը չեն գտել Հ.Հակոբյանի կողմից դիմումի մեջ իրականությանը չհամապատասխանող կեղծ տեղեկություններ մտցնելու փաստերը: Այդ առումով անհիմն է նաև Վերաքննիչ դատարանի՝ հայցվորի ներկայացուցիչ Վալենտինա Դավթյանի այն ցուցմունքների վկայակոչումը, որ իբրև «իր ամուսին Արմեն Արզումանյանի և նրա քեռու որդի Հայկ Հակոբյանի միջև եղել է հակամարտություն և թշնամանք: Նշված փաստը գործով որպես վկա հարցաքննված Հայկ Հակոբյանը չի հերքել»: Գերագույն դատարանի դատական նիստում տուժողի ներկայացուցիչ Վ.Դավթյանի տված բացատրությունների համաձայն՝ Ա.Արզումանյանի և Հ.Հակոբյանի միջև որևէ հակամարտություն և թշնամանք չի եղել, այլ եղել է մտքերի հակաճառություն: Ավելին, Դատարանի դատաքննության արձանագրությունների համաձայն՝ Հ.Հակոբյանը երբևէ չի հայտարարել, որ իր և Ա.Արզումանյանի միջև թշնամանք կամ հակամարտություն է եղել:

Բացի այդ, ըստ Գեղանուշ Արզումանյանի ընդդեմ Ասկերանի շրջվարչակազմի՝ կերակրողի մահվան հետևանքով կրած վնասը հատուցելու պահանջի մասին ԸԻԴ 0596/02/12 քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի որոշումից նկատելի է, որ Վերաքննիչ դատարանը Գ.Արզումանյանի վերաքննիչ բողոքի քննության համար նշանակություն ունեցող, փաստերի թվում ընդգրկել է նաև ԼՂՀ Ասկերանի շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի 2010թ. հունիսի 21-ի հրամանը՝ կայացված դատական ակտով հաստատված համարելով հրամանի հիմնավորվածությունը: Նույն որոշմամբ, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «գործում առկա չէ որևէ ապացույց գործատուի կողմից դպրոցի տնօրեն Արմեն Արզումանյանին նշված հերթական աշխատանքային արձակուրդից հետ կանչելու, ինչպես նաև որևէ մեկի կողմից նրան ԼՂՀ Ասկերանի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի հրավիրելու կամ կանչելու վերաբերյալ»:

Համաձայն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի՝ նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով ԼՂՀ կառավարության 1999թ. /սխալմամբ նշվել է 1996թ./ դեկտեմբերի 28-ի թիվ 166 որոշմամբ հաստատված ժամանակավոր տիպային կանոնադրության 13-րդ կետի 2-րդ /սխալմամբ նշվել է 3-րդ/ պարբերության պահանջները, որի համաձայն՝ միջնակարգ դպրոցի տնօրենին պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում շրջանի վարչակազմի ղեկավարը՝ կրթության բաժնի վարիչի ներկայացմամբ և ԼՂՀ կրթության և գիտության նախարարի գրավոր համաձայնությամբ, եզրակացրել է, որ վիճարկվող հրամանը պետք է տրվեր ոչ թե Ասկերանի շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչի, այլ շրջվարչակազմի ղեկավարի կողմից: Գերագույն դատարանն այդ կապակցությամբ անհրաժեշտ է համարում արտահայտել իր դիրքորոշումը, ելնելով սույն գործի նյութերից:

Համաձայն Օրենսգրքի 14-րդ հոդվածի՝ աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա: Տվյալ դեպքում գործատուի և Ա.Արզումանյանի միջև աշխատանքային հարաբերությունների

ծագման հիմքը եղել է ԼՂՀ կրթության, գիտության և մշակույթի նախարարության 1996թ. օգոստոսի 26-ի թիվ 122/Մ հրամանը և ԼՂՀ ժողկրթության, մշակույթի և սպորտի Ասկերանի շրջանային բաժնի 1996թ. օգոստոսի 26-ի թիվ 52 հրամանը:

Ինչ վերաբերում է ԼՂՀ կառավարության 1999թ. դեկտեմբերի 28-ի թիվ 166 որոշմանը, որտեղ դպրոցի տնօրենի նշանակման հարցում այս կամ այն ձևով մասնակցում են աշխատանքային պայմանագիր կնքելու իրավունք ունեցող երեք սուբյեկտ, Գերագույն դատարանն արձանագրում է, որ ԼՂՀ կառավարության վերոնշյալ որոշման մեջ ԼՂՀ պետական հանրակրթական հաստատության աշխատողին արձակուրդ տրամադրելու վերաբերյալ որևէ նորմ չկա: Միևնույն ժամանակ, պատասխանող կողմը միշտ էլ նշել է, որ շրջանի դպրոցների տնօրենների արձակուրդ տրամադրելու լիազորությունը 2010 թվականին վերապահված է եղել շրջվարչակազմի կրթության բաժնին՝ հիմք ընդունելով վերադաս կենտրոնական մարմինների գրավոր ցուցումը:

ԼՂՀ կրթության և գիտության նախարարի 2000թ. փետրվարի 4-ի թիվ 4/Մ հրամանով հաստատված և ԼՂՀ ֆինանսների նախարարի հետ համաձայնեցված կանոնադրության 5-րդ կետի համաձայն՝ կենտրոնացված հաշվապահություններում, որոնք ստեղծված են ԼՂՀ շրջանային վարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժիններում, բանկային ու գանձապետական փաստաթղթերը ստորագրվում են այդ հիմնարկների ղեկավարների կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Գերագույն դատարանը համարում է բավարար՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ և 241-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի 2014 թվականի փետրվարի 13-ի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Գերագույն դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին աստիճանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Գերագույն դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ԼՂՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի /այսուհետ՝ Կոնվենցիա/ 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Գերագույն դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Գերագույն դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատարանի դատական ակտին օրինական ուժ տալիս Գերագույն դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ԼՂՀ Ասկերանի շրջանի վարչակազմի ղեկավար Ս.Գրիգորյանի վճարելի բողոքը բավարարել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2014թ. փետրվարի 13-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2013թ. նոյեմբերի 8-ի վճռին:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից՝ վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ